ՆԱԽԱԳԻԾ 51

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2011 թվականի -ի N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ կետին և 23-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությանը Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից 2011 թվականի ինն ամսում հատկացնել 40,463.2 հազար դրամ՝ (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Շենքերի և շինությունների շինարարություն» հոդվածով) Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Գյուղական ճանապարհների վերականգնման ծրագրով Ա/Ճ Անտառամեջ – Ջորավանք – Դպրաբակ – Այգուտ – Մարտունի – Գետիկ – Թթուջուր – Ճամբարակ – Աղբերք – Մ 14 կմ 15+240 - կմ 48+725 ճանապարհահատվածի վերականգնման շինարարական աշխատանքների կատարումն ապահովելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի ֆինանսավորումն իրականացնել <<Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն>> պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից գործակալական պայմանագրով ստացված գործառնական ծախսերի տնտեսման գումարը՝ 40,463.2 հազար դրամ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե մուտքագրելուց հետո:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հայաստանի Հանրապետության կառավարության << Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությանը գումար հատկացնելու մասին>> որոշման նախագծի վերաբերյալ

Անտառամեջ-Ձորավանք-Դպրաբակ-Այգուտ-Մարտունի-Գետիկ-Թթուջուր-Ճամբարակ-Աղբերք-Մ14 ավտոճանապարհի կմ15+240-ից կմ48+725 (Դպրաբակ-Աղբերք) հատվածը վերականգնվում է Ասիական զարգացման բանկի աջակցությամբ ֆինանսավորվող Գյուղական ճանապարհահատվածի ծրագրի շրջանակներում: Նախագծային փաստաթղթերը մշակվել և կապալառուների հետ պայմանագրերը կնքվել են 2010թ.-ին: Սակայն ճանապարհահատվածն անցնում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Այգուտ գյուղի ակտիվ սողանքային գոտիով, որտեղ 2011թ.-ի ձմռան և գարնան ընթացքում տեղի է ունեցել իրադրության փոփոխություն՝ հանգեցնելով լրացուցիչ աշխատանքային ծավալների իրականացման անհրաժեշտության: Լրացուցիչ աշխատանքների անհրաժեշտություն է ծագել նաև Գետիկ գետի գարնանային վարարումների արդյունքում ճանապարհի առանձին տեղամասերում հողային պաստառի շեպի ողողման և փլուզումների կապակցությամբ ճանապարհի առանցքը տեղաշարժելու հետ կապված:

Այս լրացուցիչ աշխատանքային ծավալների (112 251.1 հազար դրամ) իրականացման ֆինանսավորումն ապահովելու նպատակով է պայմանավորված ՀՀ կառավարության սույն որոշման ընդունումը:

"Հայավտոճան տնօրինություն" ՊՈԱԿ-ի գործառնական ծախսերի տնտեսված գումարը 2008-2010թ.թ.-ին կազմել է 40463.2 հազ. դրամ, որից՝

2008թ. - 8598.3 հազ. դրամ;

2009թ. - 16770.2 հազ. դրամ;

2010թ. - 15094.7 հազ. դրամ:

Վերը նշված լրացուցիչ ծավալի մեջ 31523.8 հազար դրամը համաֆինանսավորման գումարն է, սակայն ծրագիրը ամբողջությամբ ավարտելու համար անհրաժեշտ համաֆինանսավորման գումարը կազմում է 40 463.2 հազար դրամ, որն առաջարկվում է ամբողջությամբ վճարել "Հայավտոճան տնօրինություն" ՊՈԱԿ-ի վերոհիշյալ տնտեսման հաշվին:

Հաշվարկ հիմնավորումները կցվում են:

Մ.ՎԱՐԴԱՆՅԱՆ